Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՒՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՒԵՏՄԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում աշխարհասփիւռ մեր ժողովրդին Աւետման շնորհազարդ տօնի առիթով եւ շնորհաւորում կանանց ու մայրերին՝ Մայրութեան եւ գեղեցկութեան օրուայ կապակցութեամբ:

Փրկչի Մարդացման մասին Սուրբ Աստուածածնին տրուած հրեշտակաձայն Աւետիսը աշխարհի փրկութեան ապտուածային խոստումի բարի լուրն էր՝ վկայութիւնը մարդու նկատմամբ Բարձրեալի անսահման սիրոյ ու հոգածութեան:

Մեր մաղթանքն է, որպէսզի կենսապարգեւ այս տօնի խորհուրդով Աստուածամօր լուսաւոր կերպարը այսօր եւ միշտ ոգեշնչի եւ առաջնորդի կանանց՝ ապրելու առ Աստուած հաւատքով, ծառայելու իրենց ընտանիքների բարօրութեանն ու ամրութեանը, մայրական հոգածութեամբ դաստիարակելու արժանաւոր զաւակներ մեր Հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու համար:

Թող Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ Միածին Որդին մայրութեան շնորհով զարդարի բոլոր կանանց եւ խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահպանի մեր մայրերին ու քոյրերին՝ միշտ խինդով լեցուն ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնուած առաքինութիւններով: